

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

### ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

### I. Տրված են 12 և 30 թվերը:

1

Գտնել այդ թվերից մեծի և փոքրի տարբերության հակադիր թիվը:

- 1) 42
- 2) -18
- 3) -42
- 4) 18

2

Գտնել այդ թվերի գումարը 5-ի բաժանելիս ստացված մնացորդը:

- 1) 0
- 2) 2
- 3) 1
- 4) 4

3

Գտնել այդ թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:

- 1) 3
- 2) 4
- 3) 60
- 4) 6

4

Գտնել այդ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

- 1) 120
- 2) 360
- 3) 60
- 4) 6

II. Գտնել արտահայտության արժեքը.

5  $1\frac{2}{3} \cdot 0,6 :$

- 1) 2
- 2) 0,7
- 3) 1
- 4) 1,4

6  $|\sqrt{4} - \sqrt{9}| :$

- 1)  $-\sqrt{5}$
- 2) 1
- 3) -1
- 4)  $\sqrt{5}$

7  $3^{\log_2 4} :$

- 1) 12
- 2) 4
- 3) 6
- 4) 9

8  $\operatorname{tg}(450^\circ - \alpha),$  եթե  $\operatorname{tg} \alpha = \frac{1}{2} :$

- 1) -2
- 2)  $\frac{1}{2}$
- 3)  $-\frac{1}{2}$
- 4) 2

III. Գտնել հավասարման արմատները.

9  $\frac{x-2}{5} = \frac{1}{x+2}$ :

- 1) 0
- 2)  $-3$  և  $3$
- 3)  $-3$
- 4)  $3$

10  $\sqrt{12-\sqrt{4x+5}} = 3$ :

- 1) 10
- 2) 0
- 3) 4
- 4) 1

11  $\sin x = \sqrt{3} \cos x$ :

- 1)  $\frac{\pi}{3} + 2\pi k, k \in Z$
- 2)  $\pi k, k \in Z$
- 3)  $\frac{\pi}{3} + \pi k, k \in Z$
- 4)  $\frac{\pi}{6} + \pi k, k \in Z$

12  $2^x \cdot 5^{x-1} = 20$ :

- 1)  $-1$
- 2)  $0$
- 3)  $1$
- 4)  $2$

IV. Լուծել անհավասարու՞նք.

13  $2(x+5) \geq 3(2-x):$

- 1)  $\left[\frac{4}{5}; +\infty\right)$
- 2)  $(-0.8; +\infty)$
- 3)  $\left(-\infty, \frac{4}{5}\right]$
- 4)  $\left[-\frac{4}{5}; +\infty\right)$

14  $|x-5| \leq 4:$

- 1)  $[1;9)$
- 2)  $(1;9]$
- 3)  $(-\infty;9]$
- 4)  $[1;9]$

15  $\sqrt{2x-5} \geq 3:$

- 1)  $\left[\frac{5}{2}; +\infty\right)$
- 2)  $(-\infty; 7]$
- 3)  $[7; +\infty)$
- 4)  $[4; +\infty)$

16  $3^{x+7} \geq 81:$

- 1)  $[-3; +\infty)$
- 2)  $(-\infty; +\infty)$
- 3)  $(-\infty; -3]$
- 4)  $(-3; +\infty)$

V. Դասարանում կա 30 աշակերտ, որոնց 20%-ը գերազանցիկ են: Դասարանի տղաները 6-ով ավելի են աղջիկներից:

17 Քանի՞ տղա կա դասարանում:

- 1) 16
- 2) 18
- 3) 9
- 4) 12

18 Գտնել դասարանի գերազանցիկ աշակերտների թիվը:

- 1) 12
- 2) 3
- 3) 5
- 4) 6

19 Գտնել դպրոցի աշակերտների թիվը, եթե այդ դասարանի աշակերտների թիվը դպրոցի աշակերտների թվի  $\frac{3}{50}$  մասն է:

- 1) 500
- 2) 200
- 3) 300
- 4) 400

20 Քանի՞ գերազանցիկ տղա կա դասարանում, եթե աղջիկների  $\frac{1}{3}$ -ն են գերազանցիկ:

- 1) 3
- 2) 1
- 3) 2
- 4) 4

**VI. Տրված է  $g(x) = x^3 - 6x^2 + 9x + 1$  ֆունկցիան:**

21 Գտնել  $g$  ֆունկցիայի ածանցյալը:

- 1)  $3x^2 - 12x + 10$
- 2)  $3x^2 - 12x + 9$
- 3)  $3x^3 - 12x^2 + 9$
- 4)  $x^2 - 6x + 9$

22 Գտնել  $g$  ֆունկցիայի կրիտիկական կետերը:

- 1) 1 և 3
- 2)  $-3$  և  $-1$
- 3) 1
- 4)  $-1$  և 3

23 Հետևյալ կետերից ո՞րն է պատկանում  $g$  ֆունկցիայի գրաֆիկին:

- 1)  $(0;1)$
- 2)  $(1;2)$
- 3)  $(2;0)$
- 4)  $(4;8)$

24 Գտնել  $g$  ֆունկցիայի մաքսիմումի կետը:

- 1)  $-1$
- 2) 3
- 3) 1
- 4)  $-3$

**VII. Չուգահեռագծի անկյունագիծը հավասար է նրա կողմերից մեկին, մեծ կողմը 6 է, անկյուններից մեկը՝  $45^\circ$ :**

25) Գտնել չուգահեռագծի փոքր կողմի երկարությունը:

- 1) 3
- 2)  $3\sqrt{2}$
- 3) 2
- 4) 6

26) Գտնել չուգահեռագծի մակերեսը:

- 1) 36
- 2) 9
- 3)  $18\sqrt{2}$
- 4) 18

27) Գտնել չուգահեռագծի մեծ անկյունագծի երկարությունը:

- 1)  $3\sqrt{10}$
- 2)  $3\sqrt{2}$
- 3) 6
- 4)  $3\sqrt{5}$

28) Գտնել չուգահեռագծի փոքր կողմին տարված բարձրության երկարությունը:

- 1) 4
- 2) 3
- 3)  $3\sqrt{2}$
- 4) 6

**VIII. Կոնի ծնորդը 10 սմ է և առանցքի հետ կազմում է  $30^\circ$  անկյուն:**

29 Գտնել կոնի հիմքի շառավղի երկարությունը:

- 1) 6,5 սմ
- 2) 4 սմ
- 3) 5 սմ
- 4) 6 սմ

30 Գտնել կոնի բարձրության երկարությունը:

- 1) 7,5 սմ
- 2)  $6\sqrt{2}$  սմ
- 3)  $5\sqrt{3}$  սմ
- 4) 7 սմ

31 Գտնել կոնի կողմնային մակերևույթի մակերեսը:

- 1)  $60\pi$  սմ<sup>2</sup>
- 2)  $40\pi$  սմ<sup>2</sup>
- 3)  $50\pi$  սմ<sup>2</sup>
- 4)  $55\pi$  սմ<sup>2</sup>

32 Գտնել կոնի ծավալը:

- 1)  $150\pi$  սմ<sup>3</sup>
- 2)  $100\pi$  սմ<sup>3</sup>
- 3)  $\frac{125\sqrt{3}\pi}{3}$  սմ<sup>3</sup>
- 4)  $120\sqrt{3}\pi$  սմ<sup>3</sup>

**IX. Տրված են  $A(0; -7)$ ,  $B(-4; -3)$ ,  $C(6; -3)$  կետերը:**

33 Ձ-տնել  $BC$  հատվածի երկարությունը:

- 1) 1
- 2) 10
- 3) 9
- 4) 8

34 Ձ-տնել  $\overrightarrow{BA}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{-4; -4\}$
- 2)  $\{4; 4\}$
- 3)  $\{4; -4\}$
- 4)  $\{4; -10\}$

35 Ձ-տնել  $\overrightarrow{BA}$  և  $\overrightarrow{BC}$  վեկտորների սկալյար արտադրյալը:

- 1)  $(10; -4)$
- 2) 40
- 3) -40
- 4) 36

36 Ձ-տնել  $ABC$  անկյան մեծությունը:

- 1)  $\arccos \frac{1}{3}$
- 2)  $60^\circ$
- 3)  $45^\circ$
- 4)  $30^\circ$

**X. Կատարել առաջադրանքը.**

37 Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $3a_5 - a_{13} = 12$ :

38  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայում՝  $S_7 = 63$ : Գտնել  $a_4$ -ը:

39 Գտնել  $(b_n)$  երկրաչափական պրոգրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 24-ի, եթե  $b_1 = 3$ ,  $q = 2$ :

40 Գտնել  $x$ -ը, եթե  $\frac{x}{2} + 2$ ;  $2x + 3$ ;  $6x + 4$  թվերը կազմում են երկրաչափական պրոգրեսիա:

**XI. Տրված է  $f(x) = \sqrt{11-x} + \sqrt{x-3}$  ֆունկցիան:**

41

$f$  ֆունկցիայի որոշման տիրույթը քանի՞ անբողջ թիվ է պարունակում:

42

Գտնել  $f^2(x)$  արտահայտության փոքրագույն արժեքը:

43

Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:

44

$f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը քանի՞ անբողջ թիվ է պարունակում:



## Բ նակարդակ

XIII. Մոտոցիկլավարը 1 կիլոմետրն անցնում է 3 րոպեով ավելի շուտ, քան հեծանվորդը, իսկ 5 ժ-ում անցնում է 50 կմ ավելի, քան հեծանվորդը:

46 Մեկ ժամում մոտոցիկլավարը հեծանվորդից քանի՞ կմ է ավելի անցնում:

47 Քանի՞ ժամում մոտոցիկլավարը կանցնի 40 կմ ավելի, քան հեծանվորդը:

48 100 կմ ճանապարհի վրա հեծանվորդը քանի՞ ժամ ավելի կծախսի, քան մոտոցիկլավարը:

49 Քանի՞ կմ/ժ է հեծանվորդի արագությունը:

XIV.  $ABCD$  քառանկյունը ներգծված է  $O$  կենտրոնով շրջանագծին:  $OA$  շառավիղն ուղղահայաց է  $OB$  շառավիղին, իսկ  $OC$  շառավիղը՝  $OD$  շառավիղին:  $C$  կետից  $AD$  ուղղին տարված ուղղահայացի երկարությունը 15 է:  $BC$  հատվածի երկարությունը 2 անգամ փոքր է  $AD$  հատվածի երկարությունից:

50 Գտնել քառանկյան  $A$  և  $B$  անկյունների գումարի աստիճանային չափը:

51 Գտնել  $BC$  -ի երկարությունը:

52 Գտնել  $ABCD$  քառանկյան մակերեսը:

53 Գտնել շրջանագծի շառավղի երկարության քառակուսին:

XV. Գտնել արտահայտության արժեքը.

54  $\frac{a^4 - 3a^2 - 4}{(a-2)(a^2+1)} - a :$

55  $\frac{3\sqrt{\cos^2 \alpha + \cos \alpha}}{2 \sin^2 \frac{\alpha}{2} - 1},$  եթե  $\frac{\pi}{2} < \alpha < \pi :$

56  $\log_{ac} b$ -ն, եթե  $\log_a b = 10, \log_c a = 4 :$

57  $4a + b,$  եթե  $P(x) = ax^3 + 4x^2 + bx - 12$  բազմանդամը  $(x-2)$ -ի բաժանելիս ստացվում է 16 մնացորդ:

XVI. Տրված է  $|3x - a| < a - 7$  անհավասարումը, որտեղ  $a$ -ն պարամետր է:

58

Գտնել  $a$ -ի ամենափոքր ամբողջ արժեքը, որի դեպքում անհավասարումը լուծում ունի:

59

Գտնել  $a$ -ի այն բնական արժեքը, որի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը 4 երկարությամբ միջակայք է:

60

Գտնել  $a$ -ի ամենափոքր բնական արժեքը, որի դեպքում 9-ը բավարարում է տրված անհավասարմանը:

61

$a$ -ի  $h^\circ$ նչ բնական արժեքի դեպքում անհավասարման լուծումների բազմությունը պարունակում է ճիշտ 5 ամբողջ թիվ:

**XVII. Կատարել առաջադրանքները.**

62

Քանի՞ տարր է պարունակում բազմությունը, եթե նրա բոլոր ենթաբազմությունների քանակը 256 է:

63

8 երեխաներից պատահականորեն ընտրվում են 3-ը և շարք կանգնեցվում: Քանի՞ տարբեր շարքեր կարելի է կազմել:

XVIII. Տրված է  $f(x) = \sin(\cos 2x)$  ֆունկցիան:

64

Ճիշտ են արդյոք հետևյալ պնդումները:

- 1)  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթը  $[-1; 1]$  միջակայքն է:
  
- 2)  $f$  ֆունկցիայի արժեքների տիրույթը  $[-\sin 1; \sin 1]$  միջակայքն է:
  
- 3)  $f$  ֆունկցիայի գրաֆիկն արսցիսների առանցքը հատում է միայն  $\frac{\pi}{4} + \frac{\pi k}{2}, k \in Z$  կետերում:
  
- 4)  $f$  ֆունկցիան գույզ է:
  
- 5)  $f$  ֆունկցիան  $\frac{\pi}{2}$  պարբերական է:
  
- 6)  $\left[-\frac{\pi}{4}; 0\right]$  միջակայքում  $f$  ֆունկցիան աճող է:

**XIX.  $ABCD A_1 B_1 C_1 D_1$  խորանարդի անկյունագծի երկարությունը 6 է:**

65

**Ճիշտ են արդյոք հետևյալ պնդումները:**

- 1)  $A_1 C$  անկյունագիծն ուղղահայաց է  $AB_1 D_1$  հարթությանը:
  
  
  
  
  
  
  
  
  
  
- 2)  $AB_1 D_1$  հարթությամբ հատույթի մակերեսը  $4\sqrt{6}$  է:
  
  
  
  
  
  
  
  
  
  
- 3)  $A_1 C$  և  $BB_1$  խաչվող ուղիղների հեռավորությունը  $2\sqrt{3}$  է:
  
  
  
  
  
  
  
  
  
  
- 4)  $BD$  և  $A_1 C$  ուղիղների կազմած անկյունը  $90^\circ$  է:
  
  
  
  
  
  
  
  
  
  
- 5)  $D$  գագաթի հեռավորությունը  $A_1 C$  անկյունագծից  $2\sqrt{3}$  է:
  
  
  
  
  
  
  
  
  
  
- 6)  $AB_1 D_1$  և  $BDC_1$  հարթությունների հեռավորությունը 2 է: